Արձանագրություն N 2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար չհրկիզվող պահարանների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՀՊ-24/1 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

17 ապրիլի 2024թ.
ժամը՝ 11:00

ք.Երևան,Մամիկոնյանց 46/5

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Թովմասյան

Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Սեփոյան, Ա. Կակոյան, Ս. Գարանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Կիրակոսյան

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գնի վերաբերյալ

Չափաբաժնի համարը	*Չափաբաժնի անվանումը*	*Արպանքի ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը (ՀՀ դրամ)*
1	Չհրկիզվող պահարաններ	3 744 000

2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 15.04.2024թ.-ին ժամը 14:00-ին:
Էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 16.04.2024թ.-ին ժամը 14:00-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) ըստ չափաբաժինների և հասցեները.

Հ/հ	*Մասնակիցների անվանումները*	*Հասցեներ*
1	Արշակ Գեղամյան Լևոնի ԱՁ	ՀՎՀՀ՝ 57446214, ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան, Ջրաշինարարների բնվ. 5 փող., տուն 16, հեռ. 077 87 77 79, levon000708@mail.ru

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՀՊ-24/1 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

eauction.armeps.am համակարգի միջոցով հրավերով նախատեսված հարցումներ չեն եղել:

6. Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

Չափաբաժնի համար	Ապրանքի անվանումը	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ		
				Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին
1	Չհրկիզվող պահարաններ	Արշակ Գեղամյան Լևոնի ԱՁ	3 744 000	3 120 000	20 %	3 744 000	3 088 800	20 %	3 706 560

Աճուրդն ամփոփվել է 16.04.2024թ.-ին և Համակարգի կողմից

- 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել **Արշակ Գեղամյան Լևոնի ԱՁ**-ն:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակցի ներկայացրած հայտը, արձանագրեց, որ

7.1. Համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **Արշակ Գեղամյան Լևոնի ԱՁ**-ի հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

-Ներկայացված հավելված 1-ում (այսուհետ՝ Դիմում-հայտարարություն) կազմակերպաիրավական անվանումը ռուսերեն լեզվով անվանման դիմաց գրված չէ ռուսերեն,

- աղյուսակի տվյալները լրացված չեն,
- նախավերջին պարբերությունը չի համապատասխանում հրավերում առկա Հավելված 1-ի օրինակելի ձևին:

- Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում՝ «Պահարանը պետք է պատրաստված կլինի 3մմ հաստության մետաղական թիթեղից» նախադասությունը փոխարինել «Պահարանը պատրաստված կլինի 3մմ հաստության մետաղական թիթեղից» նախադասությամբ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով, ինչպես նաև **ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՀՊ-24/1** ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.11 կետով՝ Հանձնաժողովը որոշեց՝ Համակարգի միջոցով ծանուցել **Արշակ Գեղամյան Լևոնի ԱՁ**-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

8.Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց նիստը շարունակել 19.04.2024թ. ժամը 17:00-ին, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

9. 19.04.2024թ. ժամը 17:00-ին նիստը վերսկսելու վերաբերյալ

Նիստը վերսկսվեց 19.04.2024թ. ժամը 17:00-ին: Հանձնաժողովն ուսումնասիրեց և արձանագրեց, որ **մասնակիցը** սահմանված ժամկետում ներկայացրել է շտկման ենթակա փաստաթղթերը:

Հանձնաժողովը որոշեց՝

1. **Արշակ Գեղամյան Լևոնի ԱՁ**-ի հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

10. Տվյալներ՝ ընտրված մասնակցի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման վերաբերյալ

30.04.2024թ. գնահատող հանձնաժողովը որոշեց՝

10.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝

- 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **Արշակ Գեղամյան Լևոնի ԱՁ-ին** հայտարարել որպես ընտրված մասնակից:

10.2 Հաստատել էլեկտրոնային աճուրդի միջոցով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

10.3 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետ չի կիրառվում:

10.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Արմեն Թովմասյան

անդամներ՝ _____ Գևորգ Սեփոյան

_____ Արսեն Կակոյան

_____ Սիլվա Գարանյան

քարտուղար՝ _____ Տաթևիկ Կիրակոսյան